ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Հասցե՝ ՀՀ, Մեծամոր
314

Հեռախոս՝ 34441
Ֆաքս՝ 34441
Էլ.փոստ՝ metsamormeria@yandex.ru

Ելից՝ _____
11 հուլիսի 2013թ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան.

Ձեզ է ներկայացվում Մեծամոր քաղաքային համայնքի քաղաքապետի 2013 թվականի հունիս ամսին ընդունած (թիվ 72-Ա մինչև 84-Ա) որոշումները և (14-Ա մինչև 18-Ա) կարգադրությունները:

Առդիր՝ 23 թերթ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՍ
Մուտք թիվ 4/6535-1
12 07 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 72-Ա

01 հունիսի 2013 թվական

ԱՇՈՏ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի երրորդ մասով, 37 հոդվածով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի առաջին մասի երկրորդ կետով և հիմք ընդունելով Հովհաննեսև Արմինե Մարտիրոսյանների դիմումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր քաղաքային համայնքի 1-ին թաղամասի թիվ 34 շենքի թիվ 27 բնակարանի բնակիչ Աշոտ Գևորգյանի /ծնվ. 07.03.2003թ/ նկատմամբ սահմանել խնամակալություն:
2. Աշոտ Գևորգյանի խնամակալ նշանակել, հորեղբորը՝ Արտյոմ Գևորգյանին :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի հունիսի 01
Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 73-Ա

07 հունիսի 2013 թվական

ԱՃՈՒՐԴ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի թիվ 290-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Կազմակերպել Մեծամոր քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող բնակավայրերի նշանակության հողերից աճուրդ վաճառք՝ 108 քմ հողամաս, 1 քմ հողամասի մեկնարկային գինը սահմանել 2000 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի հունիսի 07
Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 74-Ա

07 հունիսի 2013 թ.

ՄՐՑՈՒԹԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 77-րդ հոդվածի 2-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման բնակավայրերի նշանակության 301 քմ հողատարածքները մրցութային կարգով կառուցապատման իրավունքով տրամադրել վարձակալության՝ յուրաքանչյուր հողատարածքի վճարի չափը սահմանել համաձայն Մեծամոր քաղաքային համայնքի ավագանու 30.10.2012 թվականի թիվ 04 որոշման:
2. Տալ համապատասխան հայտարարություն «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի հունիսի 07
Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 75 -Ա

11 հունիսի 2013 թ.

ՀՈՂԱՄԱՍԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 13.11.2008 թվականի թիվ 1328 –Ն որոշմամբ .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր քաղաքի 1-ին թաղամասի 31 շենքի 8 բնակարանի բնակիչ Լեռնիկ Աշոտի Բաղդասարյանին (ծնվ. 20.01.1948թ.) 1994 թվականին Մեծամոր քաղաքի 3-րդ թաղամասում հատկացվել է N«2/16» 400քմ տնամերձ հողամաս:
2.Նշված հողամասին կից իր իսկ կողմից փաստացի ավել օգտագործվող 9 քմ հողամասը անհատույց տրամադրել նրան, որպես սեփականություն:
3. N«2/16» հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում:
4. Չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
5. Որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կառվարությանն առընթեր՝ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ համապատասխան ձևակերպում ստանալու համար:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի հունիսի 11

Ք. Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 76-Ա

11 հունիսի 2013 թվական

ԱՃՈՒՐԴ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի թիվ 290-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Կազմակերպել Մեծամոր քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող բնակավայրերի նշանակության հողերից աճուրդ վաճառք՝ 72 քմ հողամաս, 1 քմ հողամասի մեկնարկային գինը սահմանել 2000 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի հունիսի 11
Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 77-Ա

13 հունիսի 2013 թ.

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի N. 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ղազար Աբրահամյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ղազար Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող 2250քմ հողամասին տրամադրել՝ քաղաք Մեծամոր 1-ին թաղամաս N «4/12» հասցե:
2. Որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ համապատասխան ձևակերպում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի հունիսի 13
Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 78- Ա

17 հունիսի 2013 թ.

ՆԱԽԱՎՃԱՐԸ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 464 հոդվածի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 5-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.2013 թվականի մայիսի 17-ին Մեծամորի քաղաքապետարանում անցկացված համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի կառուցապատման իրավունքով տրամադրման մրցույթին մասնակիցների կողմից մուծված նախավճարը հետ վերադարձնել համաձայն հավելվածի :

2.Հանձնարարել Մեծամոր համայնքի քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետին /Ֆլորա Բավեյան/ կատարել համապատասխան ձևակերպում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի հունիսի 17
Ք.Մեծամոր

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մեծամոր քաղաքային համայնքի ղեկավարի
2013 թվականի հունիսի 17
թիվ 78-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

հհ	*Ազգանուն, անուն*	*գումարը /դրամ/*
1	Տեպիկյան Սամվել	500

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 79- Ա

17 հունիսի 2013 թ.

ՆԱԽԱՎՃԱՐԸ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 464 հոդվածի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 5-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2013 թվականի մայիսի 17-ին Մեծամորի քաղաքապետարանում անցկացված բնակավայրերի նշանակության և հողամասերի համար աճուրդի մասնակիցների կողմից մուծված նախավճարը հետ վերադարձնել համաձայն հավելվածի :

2. Հանձնարարել Մեծամոր համայնքի քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետին /Ֆլորա Բավեյան/ կատարել համապատասխան ձևակերպում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի հունիսի 17
Ք.Մեծամոր

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մեծամոր քաղաքային համայնքի ղեկավարի
2013 թվականի հունիսի 17-ի
թիվ 79-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

հհ	Անուն Ազգանուն	գումարը /դրամ/
1	Ղազարյան Արտավազդ	4800

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 80-Ա

18 հունիսի 2013 թ.

ԿԱՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 170, 204[1] հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1] , 60, 80 հոդվածներով և «Հայաստանի Հանրապետության Կառավարության 12.04.2001թ թիվ 286 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի ապրիլի 27-ի թիվ 844-Ն որոշման 46.2 կետի «ա» ենթակետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Մեծամոր քաղաքային համայնքում 2013 թվականի մայիսի 17-ին կայացած համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքով տրամադրման մրցույթի վերաբերյալ արձանագրությունները:
2. Կարեն Անտոնյանին կառուցապատման իրավունքով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի վրա տրամադրել ք. Մեծամոր 1-ին թաղամաս թիվ 24/2 60 քմ հողամաս /ծածկագիր 04-003-0035-0052/ սպասարկման օբյեկտ կառուցելու համար:
3. Տրամադրված հողամասի նկատմամբ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր՝ տարեկան վճար սահմանել 11000 /տասնմեկ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ, 25 տարի ժամկետով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի հունիսի 18
Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 81-Ա

18 հունիսի 2013թ.

ԱՃՈՒՐԴԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63, 67,68 ,70 հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետը, Մեծամոր քաղաքային համայնքի ավագանու 2012թ. հոկտեմբերի 30-ի թիվ 01 նիստի թիվ 04 որոշումը, Մեծամոր քաղաքային համայնքի ղեկավարի /աճուրդի կազմակերպիչ/ 2013թ մայիսի 15-ի «Աճուրդի կայացման վերաբերյալ» թիվ 56-Ա որոշումը և աճուրդի անցկացման մասին 2013թ. հունիսի 17-ի թիվ 1 արձանագրությունը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքային համայնքում կայացած 48 քմ հողատարածքի աճուրդային կարգով վաճառքի արդյունքները:

2.ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի 1-ին թաղամաս N«26/7» բնակավայրերի նշանակության 48 քմ մակերեսով հողակտորը /ծածկագիր 04-003-0036-0072/ օտարել վաճառքի ձևով աճուրդում հաղթող ճանաչված Սամվել Սարգսյանին 120000 /մեկ հարյուր քսան հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով կառուցապատման նպատակով, նրա հետ կնքել հողամասի առք ու վաճառքի պայմանագիր:

3.Սամվել Սարգսյանի կողմից վճարված 4800 Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով նախավճարը հաշվարկել նրա կողմից վճարվող գումարի չափին:

4.Նախագծային աշխատանքները իրականացնել քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

5. Օբյեկտի նախագիծը համաձայնեցնել աշխատակազմի գլխավոր մասնագետի հետ:

6. Շինարարական աշխատանքները սկսել համապատասխան թույլտվությունը ստանալուց հետո:

7.Կառուցապատման նպատակով հատկացված հողամասը երեք տարվա ընթացքում չօգտագործելու դեպքում կկիրառվեն համապատասխան միջոցներ:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի հունիսի 18
Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 82-Ա

19 հունիսի 2013 թ.

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի N. 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Անիկ Մաղաքյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքային համայնքի բնակիչ Անիկ Մաղաքյանին սեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասին տրամադրել՝ քաղաք Մեծամոր 3-րդ թաղամաս N «15/2» հասցե:
2. Որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ համապատասխան ձևակերպում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի հունիսի 19
Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 83-Ա

21 հունիսի 2013 թ.

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N. 2387-Ն որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Մեծամոր քաղաքային համայնքի սեփականությունը համարվող 70 քմ բնակավայրերի նշանակության հողամասին տրամադրել.

ք Մեծամոր 1-ին թաղամաս N «21/2» հասցե:

2.Որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի աշխատակազմի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում համապատասխան ձևակերպում ստանալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի հունիսի 21
Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 84-Ա

27 հունիսի 2013 թ.

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի N. 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ավետիք Միքայելյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1 Ավետիք Միքայելյանին սեփականության իրավունքով պատկանող 28քմ ավտոտնակին տրամադրել՝ քաղաք Մեծամոր 1-ին թաղամաս N «36/22» հասցե:

2 Որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի տարածքային ստորաբաժանում համապատասխան ձևակերպում ստանալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի հունիսի 27
Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ 14 -Ա

19 հունիսի 2013թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ՄԵԿՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ կետով, հիմք ընդունել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N143-Ն հրամանի 177-րդ կետի պահանջները և նկատարելով Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից հաստատված և Մեծամոր քաղաքային համայնքի ղեկավարի կողմից վավերացված Ներքին աուդիտի 2013 թվականի տարեկան ծրագրի պահանջները Մեծամորի քաղաքապետարանի առևտրի, սպասարկման և տեղական տուրքերի ու հողի վարձավճարների հավաքագրման գործընթացների մասով համակարգի գնահատման աուդիտ նատարելու նպատակով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել՝ Ներքին աուդիտի առաջադրանքի նպատակները՝
   ա/ տեղական տուրքերի և հողի վարձավճարների հաշվառման գործառույթները
   բ/ տեղական տուրքերի և հողի վարձավճարների գանձման գործառույթները
   գ/ առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայության ոլորտում վերահսկման գործառույթներ
2. Ներքին աուդիտի առաջադրանքի նպատակները իրագործելու նպատակով իրականացնել.
   - առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում իրականացված հսկողության համակարգերի արդյունավետության գնահատում
   - առևտրի և սպասարկման ոլորտը կանոնակարգող միջոցառումներ՝ վերջիններիս գործունեությունը բարելավելու նկատառումով
   - ներկայացված տեղեկատվություններում արտացոլված տվյալների արժանահավատության պարզում
3. Նախատեսված աուդիտի տարեկան ծրագրով առաջադրանքի կատարման ժամկետ սահմանել 24.06.2013 թվականից մինչև 04.07.2013թվականը:
4. Աուդիտի առաջադրանքի մասնակիցներ նշանակել Ներքին աուդտի ստորաբաժանման ղեկավար՝ Ք. Գալստյանին, աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Լ.Թովմասյանին, աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Անահիտ Հակոբյանին:
5. Կարգադրությունը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

19 հունիսի 2013 թվականի

Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ 15-Ա

19 հունիսի 2013թ

ՎԱՐԴԱՆՈՒՇ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Անահիտ Հակոբյանի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.Մեծամոր համայնքի քաղաքապետարանի տնտեսվար Վարդանուշ Մովսիսյանի հետ կնքած 2009 թվականի դեկտեմբերի 07-ի թիվ 79 պայմանագիրը լուծել 2013 թվականի հունիսի 21-ից և կատարել վերջնահաշվարկ:

2.Մեծամոր համայնքի քաղաքապետարանի գլխավոր մասնագետին /Ֆ.Բավեյան/ կատարել համապատասխան ձևակերպում:

3.Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի հունիսի 19
Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ 16-Ա

28 հունիսի 2013թ

ՄԵԾԱՄՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԹԻՎ 1 ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 186-րդ հոդվածի առաջին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի առաջին մասով և հիմք ընդունելով Մեծամորի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի «Համայնքի ենթակայության մսուր մանկապարտեզներ, արվեստի դպրոց հաճախող երեխաների պահպանության և «Մեծամորի բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության մասին» թիվ 19 որոշումը .

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Մեծամոր քաղաքային համայնքի «Թիվ 1 մսուր մանապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերությանը /տնօրեն՝ Լ.Աբրահամյան / 2013 թվականի հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 31-ը մսուր մանկապարտեզի գործունեությունը շարունակել համապատասխան խմբերով և հաստիքային միավորներով, համաձայն հավելվածի.
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի հունիսի 28
Ք.Մեծամոր

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ [illegible] Մեծամորի
քաղաքապետարանի [illegible] ղեկավարի
20[illegible] թվականի հունիսի 28-ի
թիվ [illegible] որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

«Թիվ 1 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ՝ 2 խումբ , որից 1 խումբ մսուրային հաստիքային միավորները.

1.	տնօրեն,	1
2.	գլխավոր հաշվապահ	0,5
3.	բուժքույր	0,5
4	տնտեսվար	0,5
5.	գործավար	0,5
6.	դաստիարակ /4x 0.56/	2.24
7.	դաստիարակի օգն.	1
8.	դայակ	1
9.	խոհարար	1
10.	խոհարարի օգնական	0,5
11.	դռնապահ	1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ 17-Ա

28 հունիսի 2013թ

ՄԵԾԱՄՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԹԻՎ 2 ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, 186-րդ հոդվածի առաջին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի առաջին մասով և հիմք ընդունելով Մեծամորի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի «Համայնքի ենթակայության մսուր մանկապարտեզներ, արվեստի դպրոց հաճախող երեխաների պահպանության և «Մեծամորի բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության մասին» թիվ 19 որոշումը .

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1 Մեծամոր քաղաքային համայնքի «Թիվ 2 մսուր մանապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերությանը /տնօրեն Մ.Խաչատրյան/ 2013 թվականի հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 31-ը մսուր մանկապարտեզի գործունեությունը շարունակել համապատասխան խմբերով և հաստիքային միավորներով, համաձայն հավելվածի.

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի հունիսի 28

Ք.Մեծամոր

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ Կոտայքի մարզի Մեծամորի
քաղաքապետարանի ղեկավարի
2022 թվականի հունիսի 28-ի
թիվ 17-Ն կարգադրության

«Թիվ 2 մսուր մանկապարտեզ»ՀՈԱԿ՝ 2 խումբ, որից 1խումբ հաշմանդամ երեխաների հաստիքային միավորները.

1.	տնօրեն,	1
2.	գլխավոր հաշվապահ	0,5
3.	բուժքույր	0.5
4.	դաստիարակ /3x 0 56/	1.68
5.	դաստիարակի օգն.	1
6.	խոհարար	1
7.	դռնապահ	1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ 18-Ա

28 հունիսի 2013թ

ՄԵԾԱՄՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԹԻՎ 3 ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 186-րդ հոդվածի առաջին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի առաջին մասով և հիմք ընդունելով Մեծամորի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի «Համայնքի ենթակայության մսուր մանկապարտեզներ, արվեստի դպրոց հաճախող երեխաների պահպանության և «Մեծամորի-բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության մասին» թիվ 19 որոշումը .

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր քաղաքային համայնքի «Թիվ 3 մսուր մանապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերությանը /տնօրեն Գ. Հակոբյան / 2013 թվականի հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 31-ը մսուր մանկապարտեզի գործունեությունը շարունակել համապատասխան խմբերով և հաստիքային միավորներով, համաձայն հավելվածի.

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի հունիսի 28
Ք.Մեծամոր

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ Արարատի մարզի Մեծամորի
քաղաքային համայնքի ղեկավարի
20[illegible] թվականի հունիսի 28-ի
թիվ 18-Ն կարգադրության

«Թիվ 3 մսուր մանկապարտեզ»ՀՈԱԿ՝

3 խումբ , որից 1խումբ մսուրային
հաստիքային միավորները.

1. տնօրեն,	1
2. Գլխավոր հաշվապահ	0,5
3. բուժ քույր	1
4. տնտեսվար	0,5
5. գործավար	0,5
6. դաստիարակ/3x 0.7, 3x0.42/	3,36
7. դաստիարակի օգնական	2
8. դայակ	1
9. խոհարար	1
10. խոհարարի օգնական	0,5
11. դռնապահ	1